

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՏԴ 811.19:004.9

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ
ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Դիտարկվել են տեղեկատվական տեխնոլոգիաների տերմինաբանության արդի փուլի զարգացման որոշ առանձնահատկություններ: Վերջին տասնամյակներում հայ իրականության մեջ զարգացած գիտության այս բնագավառի տերմինների գործածությունը ուսումնական գրականության մեջ միշտ չէ, որ կանոնակարգված է, դրանց՝ հիմնականում նորմավորված բառարաններում ամրագրված չլինելու պատճառով: Կատարվել են որոշ երաշխավորություններ՝ ի նպաստ գիտատեխնիկական նորագույն տերմինաբանության կանոնակարգման:

Առանցքային բառեր. նորագույն տեխնոլոգիաներ, ուսումնական գրականություն, տերմինակերտում, փոխառություն, օտարաբանություն, օտարագիր տերմիններ, տերմինաբանության կանոնակարգում:

Ինտերնետային հաղորդակցության և զանգվածային իրազեկման այսօրվա բուռն հոսքերի պայմաններում գիտական գիտելիքը լեզվում թափանցում է տերմինաբանության միջոցով՝ վերջինիս շնորհիվ դառնալով բառապաշարի հարստացման արտալեզվական գործոն: Ուստի գլոբալացման հոլովոյթում հայտնված ազգային լեզուների տերմինային բառապաշարի զարգացումը չի կարող ընթանալ մեկուսի: Այս պայմաններում հայերեն գիտատեխնիկական նորագույն տերմինաբանության զարգացման արդի փուլում առաջ են եկել որոշակի մարտահրավերներ մեր լեզվի հայեցի կերպարանքով պահպանման, ինչպես և տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագիտությունների՝ անաղարտ հայերենով ուսուցման խնդրում: Նորագույն տեխնոլոգիաների ուղղությամբ մասնագիտությունների ուսուցումը և՛ բուհական, և՛ հանրակրթության ասպարեզում պահանջում են դրանց տերմինների շուտափույթ կանոնակարգում:

Այսօր, ավանդական գիտական տերմինաբանությունների զարգացմանը զուգահեռ, ի հայտ են եկել միանգամայն նոր՝ կառավարման և մաթեմատիկական կիբեռնետիկայի, բնապահպանության, ռոբոտատեխնիկայի և մանիպուլյացիոն սարքերի, այլընտրանքային էներգետիկայի, կենսամեխանիկայի և վերականգնողական տեխնիկայի, միկրո-, նանո- և օպտոտեխնոլոգիաների և այլ բնագավառների տերմինաբանությունները, որոնք իրենց կազմում ներառել են նաև

եղած տերմինահամակարգերի՝ լեզվում արդեն իսկ քննություն անցած կամ ընդհանրական բազմիմաստ տերմինները, բնականաբար, յուրաքանչյուր բնագավառում գործառվելով նրան հատուկ հասկացությունների նշանակությամբ: Թվարկված բնագավառների տերմինաբանությունների քննությանն անդրադարձել ենք մեկ այլ աշխատանքում [1]: Սույն աշխատանքում քննվում են տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի տերմինները:

Ստորև ներկայացվում են այդ բնագավառի՝ մեր կողմից հավաքագրված տերմինների մի փոքր մասը միայն, որոնք քաղված են հիմնականում պոլիտեխնիկական համալսարանում վերջին տարիներին լույս տեսած ուսումնական գրականությունից [2,3,4,5,6,7,8], ինչպես և հրապարակի վրա եղած առանձին բառարաններից և ուսումնական բնույթի աշխատանքներից [9,10,11,12,13,14]:

Տեղեկատվական տեխնոլոգիաներ. *ինֆորմատիկա. ինֆորմացիայի՝ քանակ, ֆորմատ, հավելյալություն, ավելցուկային սիմվոլ, ծերացում, դիսկրետացում. ինֆորմացիայի ձևավորման փուլեր՝ նախապատրաստում, գրանցում, հավաքում, կողմորում, հաղորդում, մշակում, արտածում, վերարտադրում, դասակարգում, սինթեզում, ձևափոխում. ինֆորմացիոն՝ կրիչ, գործընթացներ, սահման, տրամաբանական մոդել, համակցություն, հաշվանքի էնտրոպիա. մոդուլացում՝ ամպլիտուդային, ֆազային, հաճախային. համակարգչի՝ արագագործություն, արտադրողականություն, տակտային հաճախություն. միկրոսխեմա՝ ինտեգրալային. բլոկ՝ համակարգչային սնուցման. սկավառակ՝ կոշտ, ճկուն. սրտեղեններ՝ հրամանների, տառաթվային. էկրան՝ մոնիտորի, ցուցարկիչ, արդյունքների. մկնիկ. մկնագունդ. նշորդ. նշան՝ նավարկման. սեղմակ. սեղմապահում. տպիչ. սկաներ. դիսկետ. հիշողություն. մշակում՝ տվյալների. մանրամշակիչ. Մանրաշրջույթ. հրահանգ. միույթ. կրտսեր. սարքաշար. համօգտագործում. սպասարկիչ. աշխատակայան. կապուղի՝ հաղորդակցման. սարքատարր. դրայվեր. Վիդեոքարտ. ցանցեր՝ լոկալ, հաշվողական, միակարգ, սերվերային, համակարգչային, գլոբալ. ինտերֆեյս՝ միջցանցային. հրաման՝ ինքնաձեռնարկի, թվաբանական, կանչելու, տրամաբանական, կազմակերպման, մաքրման, ղեկավարման, ղեկավարման փոխանցման, առաքման, անցման, պայմանական. հրամանի՝ բառ, բանալի. հրամանային՝ տող, պատուհան. վահանակ՝ ղեկավարման, դիմային. հավաքածուներ՝ գործիքային, ֆունկցիոնալ. մենյու՝ վերին, համատեքստային տարրերի. գործիքներ՝ թվային, տրամաբանական, տողային. ծրագիր՝ ծրագրի կտոր, ենթածրագիր. ծրագրաշար. ծրագրային ապահովում. ծրագրավորման՝ տարրեր, լեզու՝ ալգորիթմական, մեքենայակողմնորոշված, մուտքի. ալգորիթմ. խմբագրում. համակարգեր՝ ավտոմատացված, ինքնալարքային, ինքնուսուցվող, հաշվարկման, մարդ-մեքենա, իրական ժամանակի մասշտաբով աշխատող,*

խորհրդատու. *Ֆունկցիաներ*՝ մուտքի, ելքի, թվային տվյալների ֆորմատավորման, փոփոխականի տիպի ձևափոխման, ընտրության, որոշման, ստուգման, առանձնացված, ներդրված. *դուալություն*՝ հրամանների, ֆունկցիաների. *մատրիցներ*՝ միավոր, 0-ական, մեկերով, հակադարձ, կեղծ հակադարձ, ցիկլային կողի, կովարացիոն. մատրիցի աստիճան, գործողություններ մատրիցներով, էքսպոնենտներ մատրիցներին. *մատրիցների*՝ ձևավորում, գումարում, հանում. *թվային գործողություններ*. *աստիճաններ*՝ դրական, բացասական, ամբողջ, կոտորակային, աստիճան բարձրացում տարրերով. անկյունագծային մասնատում. երկչափ ինտերպոլացում. բազմանդամային հետընթաց. վեկտորական արտադրյալ. տրամաբանական արտահայտություն. փոխակերպում. փոփոխականներ, հաստատուններ. դետերմինանտներ. բազմաչափ զանգվածներ. *տվյալների*՝ կազմակերպում բազմաչափ զանգվածներում, զանգվածների դիտում. *համակարգեր*՝ քառակուսային, բացարձակ կենտրոնացված//ապակենտրոնացված հաշվողական, վերաորոշված. *հասցե*՝ բացարձակ, հարաբերական, կապի, հրամանի, սիմվոլիկ. *անալոգաթվային*՝ հաշվողական մեքենա, ձևափոխիչ. *ժամանակ*՝ ընտրման, թույլտվության, արձագանքի, պարապուրդի, ռեակցիայի. *տրամաբանական*՝ հրահանգ, սխեմա. ֆունկցիա, տարր, պայման. *մեքենայական*՝ գրաֆիկա, ծրագիր, լեզու, ժամանակ, բառ, ցուցում. *մշակում*՝ տվյալների, պատկերների, չափման, խմբակային, միաժամանակյա, ազդանշանի. *օպերատոր*՝ անցման, չնշված, նշիչով, գործառնության, միացնող, համեմատման, ցիկլի, ընտրանք-օպերատորներ. *բազմանդամ*՝ ծնող, ձևավորող. *մոդել*՝ պոստոնյացիոն, օբյեկտակողմնորոշված. *քվանտացման*՝ քայլ, սխալանք. *սխալներ*՝ միապատիկ, եռապատիկ, կամայական պատիկությանը. *ցիկլային կող*. *թամբային կետ*. *մարկովյան կապուղի*. *աշխատանքային տիրույթի դիտման պատուհան*. *գրաֆիկ*՝ ժապավենային. *ժամանակային հապաղում*. *ԼՀՑ-ների արտադրողականության բարձրացում*. *բաց առանձնանցումներ*. *սինթեքսիսի գունավորում և առանձնացում*. *կլաստերներ*. *ծրագրավորման լրացուցիչ տարրեր*. *փոփոխականներ*՝ լոկալ, գլոբալ. բացակ. *տարբույացիա*. *սիմվոլ*. *պահեստավորված բառ*. *պրոցեդուրա*. *ընդգծման նշան*. *մեկնաբանություն*. *ապաթարց*. *հրահանգիչ*. *մուտքիմեդիա*. *տեխնոլոգիաներ*՝ էլեկտրոնային, օնլայն ուսուցում, ուսուցման սերվեր. ուսուցման կառավարման ինֆորմացիոն համակարգ, դասագիրք. *ռեսուրսային կենտրոն*. *ինֆորմացիոն մշակույթ*. *ինտերակտիվ համագործակցություն*. *սլայդ*. *գաղտնագրություն*. *անվտանգություն*՝ ազգային. *ազդանշանների*՝ արտապատկերում, գաղտնազավթում, քողարկում. *ակտիվ*՝ վիրուս, խանգարում, հակառակորդ, ներթափանցում. հավասարահավանական հաղորդագրություն. *արժանահավատ*՝ ինֆորմացիա, ծրագրային ապահովում. *անխափան աշխատանք*. *անխոցելիու-*

թյուն. անձնական' իդենտիֆիկատոր. անձի նույնականացման համար. *գրոհ*' անմիջական գաղտնալսմամբ. *անվտանգության*' բարձր կարգ, աստիճան, արատ, ապահովում, ապահովման միջոցներ, ապահովման սարքավորում, ապահովում անորոշության միջոցով, արտակարգ միջոցառումներ, գաղտնագրային ծառայություն, գնահատում, գոտի, ընդհանուր մակարդակ, կանոնակարգված քաղաքականություն, խափանման ռիսկ և այլն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի տերմինների քննությունը ցույց է տալիս, որ այսօր էլ, ինչպես անցյալ դարի առաջին տասնամյակներին, նույնն են հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության (տերմինաշինության) ուղիներն ու եղանակները՝ ներքին ուղիով նորաբանությունների առաջացում (տերմինակերտում, բառիմաստի տերմինացում) և արտաքին ուղիով փոխառությունների, թարգմանությունների կատարում [15]: Այս եղանակներից յուրաքանչյուրը տերմինաբանական բառապաշարի զարգացման տարբեր փուլերում հանդես է գալիս տարբեր ինտենսիվությամբ: Մասնավորապես, միանգամայն նոր բնագավառների հասկացություն-տերմինները, չունենալով լեզվում իրենց նախորդող հենքը, ի սկզբանե ավելի շատ փոխառվում են, այնուհետև շարունակաբար կատարվում են դրանց հայերեն համարժեքների «որոնումները», որոնց արդյունքում դրանք ի վերջո կանոնակարգվում են: Որոնումների հետևանքով առաջ են գալիս ինչպես անհանձնարարելի հոմանիշներ, այնպես էլ սխալ կառուցվածքներ: Իսկ դրանց կանոնակարգման համար ժամանակ է պետք: Մյուս կողմից՝ այսօր գիտությունների սիներգիական զարգացման բնույթով պայմանավորված՝ հաճախ նկատելի է դրանց տերմինների փոխներթափանցումը միմյանց տիրույթ, այսինքն՝ գիտության տարբեր բնագավառների տերմինների՝ այլ բնագավառներում վերատերմինացումը կամ բազմիմաստ տերմինների առաջացումը: Գիտական նոր ուղղություններում լայնորեն օգտագործվում են նաև լեզվի տերմինաբանական բառապաշարում առկա ընդհանրական տերմինները:

Նորագույն տեխնոլոգիաների այս բնագավառում առայժմ գերիշխող են անմիջական փոխառությունները՝ մինչև իսկ լատինատառ գրությամբ: Օգտագործողներին ասես «չի խանգարում» ոչ դրանց օտարալեզու հնչողություն-արտասանությունը, ոչ էլ, մանավանդ, օտարատառ գրությունը.

Լեզու' VB, LabVIEW. *պրոցեդուրաներ*' print, MsgBox. *օպերատորներ*' վերագրման, If պայմանական, Select Case ընտրության, For... Next ցիկլի, For Each... Next, While.. Wend, Do... While, Do.. Until. *ֆունկցիաներ*' Lbound, UBound, InputBox. *ղեկավարման էլեմենտներ*' Command Button, Label, TextBox, CheckBox, ListBox, ComboBox, OptionButton, SHAPE, LINE, IMAGE,

PICTUREBOX, FRAME. *մոդել*' OSI, OSI մոդելի մակարդակ. *տեխնոլոգիաներ*' Ethernet (802.3), Token Ring (802.5), FDDI, Gigabit Ethernet, Fast Ethernet և 100 VG-AnyLAN որպես Ethernet տեխնոլոգիայի զարգացում. MATLAB մաթեմատիկական հաշվարկների համակարգ. մուտք MATLAB, ելք MATLAB-ից. MATLAB համակարգի աշխատանքային սեղան. MATLAB համակարգի աշխատանքային տիրույթ. Command Window (հրամանների պատուհան). (Workspace Browser). Array Editor խմբագրիչ. զանգվածներ LabVIEW միջավայրում. *կառուցվածքներ*' Sequence Structure (հաջորդական), Case Structure (ընտրությամբ), For Loop (որոշակի ցիկլի), While Loop (պայմանով ցիկլի). Formula Node (բանաձևային հանգույց). *տվյալներ*' Byte/Integer/long, Boolean, Single/Double, Currency, Decimal և այլն:

Անշուշտ, այս իրավիճակն ունի իր պատճառները: Քոմպյուտերային տեխնիկան և ինֆորմատիկան՝ որպես բնագավառներ, մեր իրականության մեջ չէ, որ սկզբնավորվել են կամ զարգացել: Դրանց հասկացություն-տերմիններն ի հայտ են գալիս հիմնականում անգլալեզու հետազոտությունների արդյունքում, և մեր իրականության մեջ դրանք առայժմ յուրացվում են ուսուցման և ուսումնասիրման ճանապարհով, երբ սովորողի կամ ուսումնասիրողի գիտակցության մեջ հասկացություն-տերմինը մտապահվում-ամրակայվում է օտարազիր տեսքով: Ուստիև այսօր շատ դանդաղ է տեղի ունենում այս բնագավառի անմիջական փոխառությունների յուրացումը՝ դրանց թարգմանությունների կամ նորակերտումների ճանապարհով: Մյուս կողմից՝ այս բնագավառի հասկացությունների չափազանց արագընթաց զարգացման պայմաններում խիստ դժվար է «հասնել դրանց ետևից». օրեցօր կատարելագործվող, երբեմն էլ արմատական փոփոխություններով զարգացող քոմպյուտերային տեխնիկայի հասկացություն-տերմիններից շատերը կարող են հաջորդ փուլում դուրս մղվել, փոխառու լեզվում մինչև վերջ մնալով փոխառության տեսքով: Առաջացել է պարադոքսային իրավիճակ. որքան իրենց «ծնող» լեզվում արագ են ի հայտ գալիս այս բնագավառի տերմինները, այնքան այլ լեզուներում ավելի դանդաղ կամ դժվար են ստեղծվում դրանց թարգմանական կամ նորաբանություն-համարժեքները: Սակայն կան արդեն իսկ յուրացված և ժամանակի առումով քիչ թե շատ կայուն տերմիններ, որոնք կարելի է գոնե հայատառ գրել, ինչպես որ ժամանակին հայատառ դարձավ *ինտերնետ* փոխառյալ տերմինի գրությունը, այսօր գրականության մեջ հանդիպում է նաև *վեբ* տերմինի հայատառ գրությունը և այլն: Լեզվի անաղարտության պահպանման տեսանկյունից մտահոգիչ է նաև այն փաստը, որ փոխառյալ և լիովին չյուրացված այս տերմինները, կազմելով ուսումնական

գրականության առանցքը, արագորեն թափանցում են նաև խոսակցական լեզվի մեջ՝ հաճախ գործածվելով մինչև իսկ ժարգոնի տեսքով:

Ուսումնական գրականության մեջ հանդիպում են նաև թարգմանված տերմիններին կից փակագծերում դրանց օտարագիր համարժեքները: Հուսանք, որ դա արվում է օտար տերմինի հայերեն համարժեքը որպես բացատրություն ներկայացնելու և արմատավորելու միտումով, այսինքն՝ ուսուցողական նպատակով.

Ազատ ռեսուրսներ (open source), Case-փաթեթի բաղադրամաս, երկխոսական համագործակցություն (dialog), DVD-CD/ROM սկավառակ, ինտերնետ (internet), ինտրանետ (intranet), օգտագործողի ինտերֆեյս (user interface), հեռուսուցում (distance learning), հիպերտեքստ (hypertext), հղում (reference), սերվեր (server), տվյալների բազա (database), ուսումնական մոդուլ (unit), ուսուցման (ուսումնառության) օբյեկտ (learning object), ուսուցման կառավարման համակարգ (learning management system), e-learning (ուսուցման ձևեր), SCORM ստանդարտներ, URL (հատուկ հասցե), ինդեքսացում (Subscripts) և այլն [16]:

Պատահական չէ, որ բառարաններում շատ հաճախ ներկայացված են այս բնագավառի ոչ թե արդեն ձևավորված տերմինները, այլ դրանց բացատրությունը կամ տերմինի հոմանշային շարքը [9,10,11,12]: Սա վկայում է, որ դրանք դեռևս չեն ձևավորվել որպես տերմիններ, մինչտերմինների կամ քվազիտերմինների կարգավիճակում են, այսինքն՝ նորմավորված-կարգավորված չեն: Ուստի ուսումնական գրականության մեջ այսօր լայնորեն գործածվում են դրանց փոխառյալ կամ օտարագիր համարժեքները: Այդ բառարաններում տերմինների բառարանագրման առանձնահատկությունների քննությունը մեկ այլ ուսումնասիրության նյութ կարող է լինել:

Եզրակացություն. Քաղաքակրթական արժեքներին հաղորդակցվող ցանկացած լեզու «բաց» է հասկացություն-տերմինների հոսքի առջև, և տերմինաբանությունը դառնում է լեզվի բառապաշարի գործուն մասնաշերտերից մեկը: Սակայն չնորմավորված և օտարաբան տերմինները, ինչպիսիք են քոմփյութերային տեխնիկայի և ինֆորմատիկայի տերմինների զգալի մասը, գործուն կերպով ներթափանցելով բառապաշարի համագործածական շերտը, աղավաղում են նաև խոսակցական լեզուն: Ե՛վ գրավոր, և՛ բանավոր խոսքում առաջացել է մարտահրավեր՝ հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության, մեծ հաշվով՝ հայոց լեզվի բառապաշարի անաղարտության պահպանման առումով: Անխուսափելի և հրատապ է նորմավորված-ստանդարտացված պոլիտեխնիկական եռալեզու նոր բառարանի կազմումը և դրան համապատասխան՝ ուսումնական գրականության լեզվի հայեցի կերպարանքով պահպանումը:

Հայեցի գիտատեխնիկական կանոնակարգված տերմինաբանություն ունենալու հարցում հոգացողությունն առաջին հերթին՝ պետական իրավասու մարմինների խնդիրն է, մասնագիտական նախանձախնդրությունը համապատասխան մասնագետների պատվի գործն է: Գիտական նորմատիվ բառարանների կազմության գործին մեծապես կնպաստեն նաև առանձին բնագավառների տերմինների լեզվաբանական գործնական ուսումնասիրությունները՝ տերմինահամակարգերը նորմավորելու և կարգավորելու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Պետրոսյան Հ.Ց.** Հայերեն գիտատեխնիկական տերմինաբանության արդի փուլի զարգացման առանձնահատկությունների շուրջ // ՀԱՊՀ Լրաբեր գիտական հոդվածների ժողովածու, Մաս 3, Ե., 2018.-էջ 928-937:
2. **Սիմոնյան Ս.Հ. և ուրիշ.** Ինֆորմացիայի կիրառական տեսություն. Ուս. ձեռնարկ.- Ե., 2007.-208 էջ:
3. **Պողոսյան Գ.Ա. և ուրիշ.** Ինֆորմատիկա. VISUAL BASIC. Մեթոդ. ցուց. և ստուգ. առաջադրանքներ.- Ե., 2007.-104 էջ:
4. **Հարությունյան Մ.Ե.** Ինֆորմացիայի տեսության հիմունքներ. Ուս. ձեռնարկ.- Ե., 2008.-139 էջ:
5. **Ավետիսյան Ռ.Ա., Նազարյան Ա.Յու.** Տվյալների բազաներ. Ուս. ձեռնարկ.- Ե., 2008.-149 էջ:
6. **Գասպարյան Օ.Ն., Կիրակոսյան Ա.Ա.** MATLAB-ի կիրառումը գիտատեխնիկական հաշվարկներում. Ուս. ձեռնարկ.- Ե., 2008.-95 էջ:
7. **Այվազյան Գ.Ա.** Ինտերնետ և ինֆորմացիայի լոկալ ցանցեր. Դասախոս. համառոտ.- Ե., 2009.-78 էջ:
8. **Գասպարյան Հ.Թ.** Տեխնիկական համակարգերում LabVIEW-ի կիրառումը. Դասագիրք.- Ե., 2011.-241 էջ:
9. **Գրիգորյան Վ., Կարապետյան Կ.** Անգլերեն-հայերեն համակարգչային և մաթեմատիկական տերմինների համառոտ բառարան.- Ե., 2005.- 173 էջ:
10. **Согомонян С.Х., Тер-Оганесян М.Х.** Русско-армянский толковый словарь по вычислительной технике.-Ер., 2012.- 98 с.
11. **Ղազարյան Էդ. Ա.** Տեղեկատվական անվտանգության անգլերեն-ռուսերեն-հայերեն հանրագիտական բառարան.- Ե., 2016.- 457 էջ:
12. **Ղազարյան Էդ. Ա., Արաբյան Ս.Գ.** Տեղեկատվական անվտանգության անգլերեն-գերմաներեն-ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն հանրագիտական բառարան.- Ե., 2018.- 285 էջ:
13. **Թարումյան Ռ.** Զրույցներ համակարգչի մասին. Ուս. ձեռնարկ.- Ե., 2003.- 208 էջ:
14. <https://www.itlab.am/pages/Ամեն-ինչ-համակարգչի-մասին.html>
15. **Պետրոսյան Հ.Ց.** Տերմինագիտության հիմունքներ. Դասագիրք.- Ե., 2010.-303 էջ:
16. **Զանփոլադյան Բ.** Նոր կրթական տեխնոլոգիաներ, Ուս. ձեռն.-Ե., 2009.-95 էջ:

Ա.Չ. ПЕТРОСЯН

**ОБ ОСОБЕННОСТЯХ РАЗВИТИЯ АРМЯНСКОЙ ТЕРМИНОЛОГИИ В
НОВЕЙШИХ ТЕХНОЛОГИЯХ**

Рассмотрены некоторые особенности развития терминологии информационных технологий на современном этапе. В последние десятилетия в армянской действительности использование терминов в данной сфере развития науки не всегда упорядочено в учебной литературе в основном в силу не включения их в нормированные словари. В статье даны некоторые рекомендации в пользу нормирования новейших научно-технических терминов.

Ключевые слова: новейшие технологии, учебная литература, терминообразование, заимствование, варваризмы, иноязычные термины, нормирование терминологии.

H.Ts. PETROSYAN

**CONSIDERATIONS ON THE DEVELOPMENT PECULIARITIES OF THE
ARMENIAN TERMINOLOGY OF MODERN TECHNOLOGIES**

Some peculiarities of the modern stage development of the information technologies terminology are considered. In recent decades, the usage of the terms in this sphere of science developed in the Armenian reality is not always regulated – mainly due to their absence in standard dictionaries. Some guarantees in favour of regulating the application of modern scientific and technical terms are made.

Keywords: modern technologies, academic literature, term creation, borrowing, barbarism, foreign terms.

ՀՏԴ 81(653)

Վ.Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՕՏԱՐ ԲԱՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌԱԳՐԵՐԻ՝ 14-ՐԴ ԴԱՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Քննության են առնվել հայերեն ձեռագրերի՝ 14-րդ դարի հիշատակարաններում արձանագրված օտար ծագման այն բառերը, որոնց օտար լինելը գիտակցվում է հայերենի զարգացման բոլոր փուլերում:

Առանցքային բառեր. ձեռագիր, հիշատակարան, օտար բառեր, փոխառություն, գրիչ (ձեռագիր ընդօրինակող):

Ներածություն: Սույն ուսումնասիրությունը վերաբերում է ձեռագրերի՝ 14-րդ դարի հիշատակարաններում արձանագրված այն բառերին, որոնց օտար ծագումը գիտակցվում է հայերենի զարգացման բոլոր փուլերում: Ըստ բառարա-